ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<12> մարտի 2016թ. N 34-Ա

ԱՇՈՏ ՎԱՐԴԳԵՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Աշոտ Վարդգեսի Կարապետյանի 2016 թվականի մարտի 9-ի N1901-16 դիմումը՝

կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Աշոտ Վարդգեսի Կարապետյանին 2016 թվականի մարտի 15-ից մինչև ապրիլի 7-ը ներառյալ թույլատրել մասնակցելու Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում անցկացվող վերապատրաստման դասընթացներին:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բուժական գծով փոխտնօրեն Էմմա Իսպիրյանի վրա:

3. Վերապատրաստման ծախսերի հատուցումը կատարում է հրավիրող կողմը:

4.Աշխատանքի մեջ համարել 2016 թվականի ապրիլի 8-ին:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ